**APOSTILLE**

(CONVENTION DE LA HAYE DU 5 OCTOBRE 1961)

1. Country: REPUBLIC OF ARMENIA

This public document

2. Has been signed by A. HAYRAPETYAN
(surname)

3. Acting in the capacity of NOTARY OF KENTRON NOTARIAL TERRITORY OF
(position)
THE REPUBLIC OF ARMENIA

4. Bears the seal/stamp of NOTARY

CERTIFIED

5. At CITY YEREVAN 6. the 18 OCTOBER 2017

7. by ACTING HEAD OF THE CIVIL STATUS ACTS REGISTRATION AGENCY OF
(position and surname)
THE MINISTRY OF JUSTICE OF THE REPUBLIC OF ARMENIA
ALBERT VIRABYAN

8. № 016127

9. Seal/Stamp: 10. Signature:

Verify at www.e-apostille.am
with C285-E213-CBB2-8A5D

*Թարգմանված է անգլերենից*

ՄԻԼԱՆԻ ԱՌԵՎՏՐԻ ՊԱԼԱՏ

Փաստաթղթի համար՝ CEW/10175/2017/CMI1307 09/08/2017

ՄԻԼԱՆԻ ԱՌԵՎՏՐԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏՆԵՐ
ԱՌԵՎՏՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

*ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ*

Հարկային ծածկագիր և գրանցման համար՝ 00793580150
Միլանի Առևտրի ռեգիստրում
Գրանցման ամսաթիվ՝ 19/02/1996

Գրանցված է ՍՈՎՈՐԱԿԱՆ բաժնում 19/02/1996-ին

Գրանցված է Տնտեսական և ադմինիստրատիվ համարի ներքո՝ MI-42 9222 20/11/1952-ին

Անվանում՝ CESI – CENTRO ELETTROTECNICO SPERIMENTALE ITALIANO
GIACINTO MOTTA S.P.A. կամ հապավմամբ՝ CESI S.P.A.

Ընկերության տեսակը՝ բաժնետիրական ընկերություն

Գրասենյակ՝ ՄԻԼԱՆ (MI) 54 Ռաֆաելե Ռուբատինո փողոց, CAP 20134

հաստատված էլ. հասցե՝
SOCIETARIO.CESI@LEGALMAIL.IT

Միավորման ամսաթիվ՝ 12/11/1952

Միավորված է 12/11/1952-ին կնքած ակտով

Ընկերության գործունեության ավարտը՝ 31/12/2050

Ընկերության նպատակը՝

Ընկերության նպատակն է նախագծել, կառուցել և կառավարել լաբորատորիաներ, թեստավորման կառույցներ, հատուկ սարքեր, չափման և հաշվարկային համակարգեր, առաջադեմ տեխնոլոգիական մշակումներ և հավելվածներ, ինչպես նաև երրորդ անձանց անունից, տրամադրել թեստավորում, զննում, ուսումնասիրում, հետազոտություններ, խորհրդատվություն, ինժեներություն, դիզայն, ապրանքների, սարքավորումների, ծառայությունների և համակարգերի համար որակավորման և սերտիֆիկացման ծառայություններ, ուսուցման և տեխնիկական աջակցություն, ինչպես նաև համակարգելով երրորդ անձանց գործունեությունը, այդ ամենը մաքուր և առաջադեմ գիտական ուսումնասիրությունների խթանման նպատակով՝ էլեկտրա-տեխնիկական, էներգիայի, էլեկտրական և տեղեկատվական տեխնոլոգիաների սեկտորների առաջընթացի համար:
Ընկերության նպատակը նաև ներառում է բոլոր ուսումնասիրությունները, դիզայնը, սերտիֆիկացումը, խորհրդատվությունը և ինժեներական ծառայությունները բոլոր հասարակական և բնապահպանական սեկտորներում, ներառյալ, որպես օրինակ՝ արդյունաբերական սարքավորումների համար վերլուծություն, ուսումնասիրություն, մոդելավորում, մշտադիտարկում և բնապահպանական ախտորոշիչ ծառայություններ, բնապահպանական հողերի վերաորակավորում և առնչվող ծառայություններ, դիզայնի, մշտադիտարկման, մոդելավորման, զննման և ղեկավարման ծառայություններ համալիր հասարակական և արդյունաբերական կառույցների կառուցման համար:
Ընկերությունը կարող է նաև թողարկել տեխնիկական և գիտական հրատարակություններ և տրամադրել տեխնիկական-գիտական գործընկերություններ՝ հղում կատարելով զարգացող երկրներին: Ընկերությունը կարող է կատարել բոլոր գործարքները, որոնք անհրաժեշտ է կամ օգտակար ընկերության նպատակներին հասնելու համար:
Օրինակ՝ այն կարող է իրականացնել անշարժ գույքի, ունեցվածքի, առևտրային, արդյունաբերական և ֆինանսական գործարքներ, բացառությամբ՝ խնայողությունների հավաքագրումը հասարակական և այն գործունեության, որոնք կառավարվում են 1991 թվականի հունվարի 2-ին ընդունված Համար 1 օրենքով:
Ընկերությունը կարող է ձեռք բերել ակցիաներ և բաժնետոմսեր Իտալիայի և արտերկրի այլ ընկերություններում, բիզնեսներում, կոնսորցիումում, ասոցիացիաներում, ժամանակավոր գործընկերությունում՝ ունենալով առաքելություն, որը նման է կամ կապված կամ լրացնում է իր կամ իր որևէ ընկերություններին, որտեղ ունի մասնաբաժին, և կարող է տրամադրել գրավի և անձնական երաշխիքներ իր կամ երրորդ անձի ակցիայի համար:

*ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ՝
Գրասենյակում անդամների թիվը՝ 10
Պաշտոնավարման ժամկետը՝ 3 ֆինանսական տարի

ՎԵՐՍՏՈՒԳԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ՝
Կանոնադրական վերստուգիչների թիվը՝ 3
Այլընտրանքային վերստուգիչների թիվը՝ 2
Պաշտոնավարման ժամկետը՝ 3 տարի

*ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ*

Տնօրենների խորհրդի անդամների պաշտոնին առնչվող իրավասություններ՝
տնօրենները բացառապես պատասխանատու են բիզնեսի կառավարման համար՝ իրականացնելով գործարքներ, որոնք անհրաժեշտ են ընկերության նպատակներին հասնելու համար:
Օրենքով սահմանված իրավասությունները կատարելուց բացի՝ Տնօրենների խորհուրդն իրավասու է որոշում կայացնել՝
Ա) օրենքով սահմանված կարգով միաձուլումների և կրկնակի թողարկումների մասին,
Բ) մասնաճյուղերի ստեղծման և փակման մասին,
Գ) նշանակման մասին, թե որ տնօրենը պետք է ներկայացնի ընկերությունը,
Դ) բաժնետիրական կապիտալի նվազեցման մասին, եթե մեկ կամ մի քանի բաժնետերեր դուրս են գալիս,
Ե) կանոնակարգող դրույթներին Կանոնադրությունը հարմարեցնելու մասին,
Զ) Իտալիայում ընկերության գրասենյակների տեղափոխման մասին,
Է) օրենքով թույլատրված դեպքերում բաժնետիրական կապիտալի նվազեցման մասին:
Նախագահը և գործադիր տնօրենը, ինչպես նաև առաջինի բացակայության դեպքում և նշանակված լինելու դեպքում՝ նաև նախագահի տեղակալը, իրավականորեն ներկայացնում են ընկերությունը և ունեն ստորագրելու իրավասություն: Նախագահի տեղակալի ստորագրությունը համարվում է ապացույց երրորդ անձանց համար նախագահի բացակայության դեպքում:
Տվյալ իրավական ներկայացուցիչը կարող է շնորհել իրավասություն՝ ներկայացնելու ընկերությունը նույնիսկ դատարանում իրավական սահմաններում:
Իտալիայի քաղաքացիական օրենսգրքի հոդված 2381-ում նշված սահմաններում Տնօրենների խորհուրդը կարող է փոխանցել իրեն վերագրված հանձնարարությունները գործադիր կոմիտեին և/կամ մեկ կամ մի քանի անդամներին՝ սահմանելով բովանդակությունը, սահմանափակումները և կատարման եղանակները:

*ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ*

Բաժնետիրական կապիտալ եվրոյով՝

| | |
|---|---|
| հաստատված՝ | 8,550,000.00 |
| գրանցված՝ | 8,550,000.00 |

վճարված՝ 8,550,000.00

*ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ*

Ընկերության գրանցված գրասենյակներում կատարվող գործունեությունը՝
Ընկերությունը սկսել է իր գործունեության բոլոր տեսակները, որոնք նշված են Ընկերության նպատակում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ համար՝ 6378
Շրջան՝ MI

Բնապահպանական կառավարիչների ազգային ռեեստր
(աղբյուր՝ Բնապահպանության նախարարություն)
Գրանցված է՝ Միլանում
Գրանցման համար՝ MI/059868
Կատեգորիա՝ 9 – տարածքի վերականգնում
Դաս՝ B – մինչև 9,000,000.00
Սկիզբ՝ 30/11/2016
Ավարտ՝ 30/11/2021

*ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ*

Մակի Սալվատորե (Ընկերության ներկայացուցիչ)
ծնված Պալերմոյում (PA) 28/05/1937 թվականին
Հարկային կոդ՝ MCHSVT37E28G273X
- Տնօրեն՝ նշանակված 01/04/2015 կնքած ակտով
ներկայացած 13/04/2015
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
- Տնօրենների խորհրդի նախագահ՝ նշանակված 01/04/2015 կնքած ակտով
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Իրավասությունները՝
Տնօրենների խորհրդի 2015 թվականի ապրիլի 9-ին ընդունած որոշմամբ՝ նախագահ Սալվատորե Մակին, համաձայն օրենքի և ներքին իրավական ակտերի, հաստատված է որպես ընկերության օրինական ներկայացուցիչ ամբողջական իրավունքներով՝ կապված ընկերության մարմինների, տնօրենների խորհրդի ժողովի գործառույթների հետ, ով պետք է ապահովի Տնօրենների խորհրդի որոշումների կատարումը:

Կողացի Պիեռ Մատեո (Ընկերության ներկայացուցիչ)
ծնված Սանռեմոյում (IM) 22/07/1967 թվականին
Հարկային կոդ՝ CDZPMT67L22I138Q
- Տնօրեն՝ նշանակված 01/04/2015 կնքած ակտով
ներկայացած 13/04/2015
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Առաջին գրանցումը՝ 22/05/2009
- Գլխավոր գործադիր տնօրեն՝ նշանակված 09/04/2015 կնքած ակտով
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Գրանցման ամսաթիվ՝ 06/05/2015
Իրավասությունները՝
Տնօրենների խորհրդի 2015 թվականի ապրիլի 9-ին ընդունած որոշմամբ՝ գլխավոր գործադիր տնօրեն Կողացի Պիեռ Մատեոյին շնորհվել է բոլոր իրավունքները՝ կառավարելու ընկերությունը, բացառությամբ տնօրենների խորհրդի՝ օրենքով և ներքին իրավական ակտերով սահմանված իրավունքների:
Ներքոնշյալ իրավասությունները նույնպես շնորհված են տնօրենների խորհրդին՝
Ա) տարեկան բյուջեի և բազմամյա պլանների հաստատում, որոնք նախագծվում են գլխավոր գործադիր տնօրենի կողմից,
Բ) նոր ընկերությունների հետ համագործակցություն և այլ ընկերություններում բաժնետոմսերի ձեռքբերում և զրկում,
Գ) 2,750,000.00 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) եվրո գումարը գերազանցող միջնաժամկետ կամ երկարաժամկետ վարկերի կամ գրավների բացում,
Դ) ռազմավարական պայմանագրերի նախագծում և կոնվենցիաների հաստատում (նախարարությունների, տեղական կառավարման մարմինների և այլոց հետ), որոնք հատուկ կարևորություն ունեն ընկերության համար կամ ներառում են 2,750,000.00 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) եվրոո գերազանցող ներդրում,
Ե) 8,250,000.00 (ութ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) եվրո գումարը գերազանցող տենդերներում, առաջարկներում և ձեռքբերումներում մասնակցություն,
Զ) կոնսորցիումներում, ժամանակավոր բիզնես խմբերում, ժամանակավոր համատեղ ձեռնարկություններում մասնակցություն, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք անմիջականորեն ձևավորվել են տենդերներում կամ համատեղ նախագծերում մասնակցության համար,
Է) 260,000.00 (երկու հարյուր վաթսուն հազար) եվրոն գերազանցող արժեքով անշարժ գույքի ակտիվների ձեռքբերում, փոխանակում կամ վաճառք,

Ը) ավելի քան ինը տարի ժամկետով կամ տարեկան 250,000.00 (երկու հարյուր հիսուն հազար) եվրոն գերազանցող անշարժ գույքի վարձակալություն,
Թ) 260,000.00 (երկու հարյուր վաթսուն հազար) եվրոն գերազանցող շարժական գույքի վաճառք,
Ժ) գործադիր տնօրենի նշանակում,
Ի) ընկերության հիմնարար կազմակերպչական կառուցվածքի փոփոխություն:
3. Իրեն շնորհված իրավասությունների շրջանակում գլխավոր գործադիր տնօրենը լիազորվում է՝ 1) նշանակել օրինական ներկայացուցիչներ և շնորհել նրանց, ներառյալ գործադիր տնօրենին, իրավունք՝ կատարելու որոշակի պարտավորություններ կամ պարտավորությունների կատեգորիաներ, և 2) անհրաժեշտության դեպքում հաստատել է, չեղարկել և/կամ փոփոխել ընկերությունում շնորհված իրավունքները, լիազորությունները և լիազորագրերը:

Ռոմեո Ֆաբիո Իգնացիո
ծնված Ռոյում (MI) 25/08/1955 թվականին
Հարկային կոդ՝ RMOFGN55M25H264M
- Տնօրեն՝ նշանակված 01/04/2015 կնքած ակտով
ներկայացած 13/04/2015
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Առաջին գրանցումը՝ 22/05/2009

Ֆիորե Անտոնիո
ծնված Բարիում (BA) 05/11/1965 թվականին
Հարկային կոդ՝ FRINTN65S05A662E
- Գործակալ՝ նշանակված 16/09/2010 կնքած ակտով
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ հեռացումը
Գրանցման ամսաթիվ՝ 01/10/2010
Իրավունքները՝
Միլանի նոտար Ջոզեպպե Կալաֆիորիի կողմից հաստատված 2010 թվականի սեպտեմբերի 16-ին տրված համար 63773/16894 լիազորագրով՝ որպես Ինժեներություն և շրջապատ – ԻՍՄԵՍ բաժնի վաճառքի և մարկեթինգի կառավարիչ, սահմանափակված լինելով իր պատասխանատվության տակ գտնվող կազմակերպչական կառուցվածքի գործունեությամբ, ստորագրելով անհատական ակտեր, փաստաթղթեր և նամակներ՝ գործարկել հետևյալ իրավունքները CESI-ի անունից և կողմից առանց վերալիազորելու իրավունքի՝
Ա) ներկայացնել ընկերությունը Իտալիայում և արտերկրում, ցանկացած պետական և ոչ պետական մարմիններին, կառավարման մարմիններին կամ գրասենյակներին, մասնավոր

սեկտորի մարմիններին, տեղական, շրջանային կամ տարածքային մարմիններին՝ կապված պարտականությունների կատարման հետ,

Բ) կատարել իր կազմակերպչական կառուցվածքում գրասենյակների գործունեության կառավարման, համակարգման և մտադիտարկման գործառույթները,

Գ) թողարկել, հավաքել և ուղարկել փաթեթներ, դոսյեներ, նամակներ, գրանցված կամ ապահովագրված առաքման, ապրանքների, արժեքների, օրինագծերի կամ այլ նամակներ, որոնք ուղարկվել են հասարակական կամ մասնավոր գրասենյակներին, ստորագրել նամակագրությունը և բոլոր հասարակ ակտերը՝ կապված կազմակերպչական կառուցվածքի հետ,

Դ) գնել շարժական գույք առավելագույնը 516.00 եվրո յուրաքանչյուր գնման համար,

Ե) կատարել առաջարկներ, մասնակցել տենդերներին, քննարկել, փոփոխել և դադարեցնել մատակարարման պայմանագրերը ապրանքների և/կամ ծառայությունների համար ընկերությունների կողմից, ինչպիսին են, որպես օրինակ՝ մեքենաները, մեխանիզմները, սարքերը, ուսումնասիրությունները, նախագծերը, փորձարկումները, սերտիֆիկացիաները, խորհրդատվությունները՝ մինչև առավելագույնը 100,000.00 եվրո յուրաքանչյուր անգամվա համար,

Զ) կատարել ցանկացած օժանդակող, լրացուցիչ կամ երկրորդական գործունեություն՝ կապված վերոնշյալ իրավունքների հետ:

Վերոնշյալ լիազորագիրը նաև շնորհում է իրավունք՝ օրինական ձևով ներկայացնելու ընկերությունը շնորհված իրավունքները կատարելու նպատակով:

<u>Ֆիոկո Ալեսանդրո</u>
ծնված Լ՛Աքիլայում (AQ) 16/12/1966 թվականին
Հարկային կոդ՝ FCCLSN66T16A345B
- Տնօրեն՝ նշանակված 01/04/2015 կնքած ակտով
ներկայացած 13/04/2015
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Առաջին գրանցումը՝ 11/06/2012

<u>Անդրեիս Դոմենիկո</u>
ծնված Սավոնայում (SV) 29/03/1963 թվականին
Հարկային կոդ՝ NDRDNC63C29I480Y
- Գործակալ՝ նշանակված 01/02/2014 կնքած ակտով
Պաշտոնավարության ժամկետը՝ անժամկետ
Գրանցման ամսաթիվը՝ 04/02/2014
Իրավունքները՝

Պարոն Անդրեիս Դոմենիկոյին, մասնավոր ակտով, ստորագրված Միլանի նոտար Ջոզեպպե Կալաֆիորիի կողմից 2014 թվականի հունվարի 14-ին համար 72050/20016 ներքո, շնորհվում են իրավունքներ՝ սկսած 2014 թվականի փետրվարի 1-ից, որպես Ինժեներություն և շրջապատ – ԻՍՄԵՍ բաժնի տնօրեն, սահմանափակված լինելով բաժնի գործունեությամբ, CESI-ի անունից և կողմից վերալիազորման իրավունքով ստորագրությամբ գործարկել հետևյալ իրավունքները՝

Ա) ներկայացնել ընկերությունը՝ իր բաժնի հետ կապված ցանկացած գործարք կատարելու համար, Իտալիայում կամ արտերկրում, ցանկացած պետական կամ պետության կողմից վերահսկվող մարմիններում, կառավարման մարմիններում կամ գրասենյակներում, մասնավոր և հասարակական սեկտորներում, ներառյալ, օրինակ՝ առևտրի պալատում,

Բ) կատարել իր բաժնի գրասենյակների գործունեության կառավարման, համակարգման և մտադիտարկման գործառույթները,

Գ) ստորագրել ընկերության շահերից բխող ակտեր, փաստաթղթեր և նամակագրություն և կատրել կամ համաձայնել ցանկացած պետական կամ պետության կողմից վերահսկվող մարմինների՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձի հետ, պետական, տեղական, տարածքային կամ շրջանային մարմինների, ֆինանսական կամ հարկային մարմինների հետ կամ ցանկացած այլ հասարակական կամ մասնավոր կառավարման մարմինների հետ Իտալիայում կամ արտերկրում, ինչպես նաև ակտեր, որոնք կապված են վերագրված պարտականությունների կատարման հետ,

Դ) թողարկել, հավաքել և ուղարկել փաթեթներ, դոսյեներ, նամակներ, գրանցված կամ ապահովագրված առաքման, ապրանքների, արժեքների, օրինագծերի կամ այլ նամակներ, որոնք ուղարկվել են հասարակական կամ մասնավոր գրասենյակներին,

Ե) գնել շարժական գույք առավելագույնը 516.00 եվրո յուրաքանչյուր գնման համար,

Զ) ստորագրել տեխնիկական փաստաթղթերը, ներառյալ, օրինակ՝ համապատասխանության և պիտանիության հայտարարագրեր, իրենց բոլոր հետևանքներով, երրորդ անձանց կողմից կամ համար կատարվող գործունեության կամ ծառայությունների համար (ուսումնասիրություններ, թեստավորումներ, փորձարկումներ և տեխնիկական-գիտական մատակարարումներ և այլն), ներառյալ՝ ստուգում, հաստատում, առաքում և թեստավորում, ցանկացած թերության հայտնաբերման դեպքում բողոքի ներկայացում,

Է) կատարել առաջարկներ, մասնակցել տենդերներին, քննարկել, փոփոխել և դադարեցնել մատակարարման պայմանագրերը ապրանքների և/կամ ծառայությունների համար ընկերությունների կողմից, ինչպիսին են, որպես օրինակ՝ մեքենաները, մեխանիզմները, սարքերը, ուսումնասիրությունները, նախագծերը, փորձարկումները, սերտիֆիկացիաները, խորհրդատվությունները՝ մինչև առավելագույնը 100,000.00 եվրո յուրաքանչյուր անգամվա համար: Վերոնշյալ լիազորություններն իրավունք են տալիս օրինական ներկայացնել ընկերությունը՝ պայմանագրերը և առաջարկները ստորագրելով,

Ջ) կատարել ցանկացած օժանդակող, լրացուցիչ կամ երկրորդական գործունեություն՝ կապված վերոնշյալ իրավունքների հետ:

Վերոնշյալ լիազորագիրը նաև շնորհում է իրավունք, առանց վերալիազորման իրավունքի՝
1. քննարկել, փոփոխել կամ դադարեցնել պայմանագրերն ու համաձայնագրերը՝ կապված կոնսորցիումում, ժամանակավոր բիզնես խմբերում, համատեղ ձեռնարկություններում և այլ տեսակի համագործակցային համաձայնագրերում ընկերության ունեցած մասնաբաժնի հետ, որոնք բացառապես կապված են ընկերության՝ տենդերներում մասնակցելու կամ ընկերության համար պատվերները շահելու հետ առավելագույնը 1,000,000.00 եվրո արժեքով, և որը ներառում է ընկերության համար պայմանագրային ռիսկ ստանձնելը 1,000,000.00 եվրոյի չափով,
2. քննարկել, փոփոխել կամ դադարեցնել գործակալությունների պայմանագրերը:
Վերոնշյալ լիազորությունը շնորհում է նաև իրավունք՝ օրինականորեն ներկայացնել ընկերությունը՝ շնորհված իրավունքները կատարելու համար:
Տնօրենների խորհրդի՝ 2014 թվականի հունվարի 20-ին ընդունած և 2014 թվականի փետրվարի 1-ին ուժի մեջ մտած որոշմամբ՝ պարոն Դոմենիկո Անդրեիսը նշանակված է գործատու Ինժեներություն և շրջապատ – ԻՍՄԵՍ արտադրական կետում, ինչպես սահմանված է օրենսդրական հրաման 81-08-ում՝ իր Ինժեներություն և շրջապատ արտադրական կետում հատուկ մանդատով՝ ապահովելու համապատասխանություն բոլոր գործող և հետագա իրավական պահանջների հետ՝ օրենքով սահմանված շրջանակում՝ հետևյալ գործողությունները վերալիազորելու իրավունքով՝
1. առողջություն, անվտանգություն և հիգիենա աշխատավայրում, պատահարներ և մասնագիտական հիվանդությունների կանխարգելում աշխատանքում և հրդեհների կանխարգելում (օրինակ՝ նրանք, որոնք նշված են հետևյալ դրույթներում՝ օրենսդրական հրաման 81/08, նախագահական հրաման 577/1982, նախագահական հրաման 37/1998, նախարարական հրաման 10/03/1998 և այլն),
2. շրջակա միջավայրի պաշտպանություն, ընկերության գրասենյակի ներսում և դրսում, ինչպես նաև արդյունաբերական կառույցներում և աշխատավայրում ակուստիկ, միջավայրի, հիգիենիկ ախտոտվածություն թափոնային ապրանքներից կամ ցանկացած այլ աղբյուրից (օրինակ՝ նրանք, որոնք նշված են հետևյալ օրենսդրական դրույթներում՝ օրենսդրական հրաման 152/2006).
Տվյալ հատուկ մանդատին ամբողջապես համապատասխանելու համար՝ գործատուին շնորհվում է ամբողջական իրավասություն, ներառյալ՝
Ա) ուղղել ընկերության աշխատանքային գործունեությունը՝ կիրառելով ամենահարմար տարբերակը՝ ապահովելու համար ամբողջական համապատասխանություն գործող իրավական պահանջներին և դրանց հետագա փոփոխություններին՝ ընդունելով ամբողջական և ուղղակի պատասխանատվություն՝ իրավունք ունենալով կատարել բոլոր անհրաժեշտ փոփոխությունները կիրառված ցանկացած տեխնոլոգիայի վրա,
Բ) սովորեցնել, տեղեկացնել աշխատակիցներին՝ կատարելու անհրաժեշտ գործողությունները, ներառյալ կարգապահական գործողությունները, ձախողման դեպքում՝ հետևել անձամբ կամ իր կողմից նշանակվածների միջոցով գրավոր ձևով,

Գ) պատվիրել բոլոր գործիքների, սարքերի և սարքավորումների գնումը, որոնք անհրաժեշտ են դրված նպատակներին հասնելու համար,
Դ) նախագծել, ստորագրել, համաձայնեցնել և ներկայացնել ցանկացած տեսակի փաստաթուղթ կամ դոսիե, տեխնիկական կամ ադմինիստրատիվ բնույթի, ներառյալ բոլոր կանոնակարգող պահանջները, որոնք նշված են գործող և հետագա կանոնակարգերում՝ ընդունելով ուղղակի և անձնական պատասխանատվություն,
Ե) տվյալ մանդատը կիրառելիս օգտագործել ենթակա աշխատակիցներին, ովքեր ըստ իրեն որակավորված են, հարմար և իրազեկ, և ում վերջինս ղեկավարում է և ում աշխատանքի համար ուղղակիորեն պատասխանատու է դառնում,
Զ) ձեռնարկել բոլոր քայլերը, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու, որ բոլոր գործողությունները համապատասխանում են վերոնշյալ կանոնակարգերին,
Է) ձեռնարկել բոլոր համապատասխան և անհրաժեշտ քայլերը՝ խուսափելու կամ կանխարգելելու որևէ վտանգավոր իրավիճակի ծագում, որը ընկերության գործողությունների արդյունքում կարող է առաջացնել վտանգ աշխատակիցների կամ երրորդ անձանց համար,
Ը) տնօրինել ընկերության ֆինանսական ռեսուրսները, առանց դրանք ծախսելու որևէ սահմանափակման, և որպես հետևանք՝ որոշումների կայացման և ծախսելու իրավունքները, եթե դա անհրաժեշտ է վերոնշյալ առողջության, անվտանգության և բնապահպանության հետ կապված իրավունքները կատարելու համար:
Հատուկ դեպքերի այս ցանկը նպատակ ունի տալու ոչ սպառիկ օրինակ: Գործատուից պահանջվում է անձամբ կամ վերալիազորված անձանց, մանդատների կամ կազմակերպչական դիրեկտիվների միջոցով զբաղվել բոլոր հարցերով, որոնք կապված են դրանց առնչվող հարցերի կատարմամբ՝ ամբողջապես հետևելով գործող կանոնակարգերին:
************************************************************************************************************************************

Տնօրենների խորհրդի՝ 2014 թվականի հունվարի 20-ին ընդունած և 2014 թվականի փետրվարի 1-ին ուժի մեջ մտած որոշմամբ՝ Ինժեներություն և շրջապատ – ԻՍՄԵՍ բաժնի տնօրենը նշանակվել է որպես CESI-ի կողմից բացված ժամանակավոր կամ շարժական աշխատավայրերի ղեկավար՝ համաձայն 81/08 օրենսդրական հրամանի և կապված Ինժեներություն և շրջապատ – ԻՍՄԵՍ բաժնի հետ, ներքոնշյալ բոլոր անհրաժեշտ իրավունքներով որպես օրինակ կիրառել ամբողջական ֆունկցիոնալ և կազմակերպչական անկախություն՝
- վերահսկել տենդերի բոլոր փուլերի ճիշտ կառավարումը, ներառյալ՝ կազմման դիզայնը և պլանավորումը, տեխնիկական ընտրությունները, նախագծի մշակումը և աշխատավայրի կազմակերպումը,
- ապահովել 81/08 օրենսդրական հրամանի վերջին փոփոխություններով և ներառումներով հոդված 90-ում նշված անվտանգության միջոցառումների կատարումը աշխատավայրում,

- ապահովել, որ աշխատանքների կատարումը բոլոր փուլերում մինչ դրանց ավարտին հասցնելը պլանավորած է՝ համաձայն անվտանգության կանոնակարգերի,
- ապահովել ամբողջական համապատասխանություն համապատասխան կանոնակարգերի հետ՝ իրավունք ունենալով ընտրել, կազմակերպել և վերահսկել մարդկային ռեսուրսները,
- գործող կանոնակարգերի շրջանակում իր հայեցողությամբ փոխանցել բոլոր գործողությունները այն մարդկանց, ովքեր հարմար են, որակավորված և իրազեկ՝ նշանակելով նրանց վերոնշյալ կանոնակարգերում նշված պաշտոններում,
- կիրառել վերոնշյալ իրավունքներն իր հայեցողությամբ, անհրաժեշտության դեպքում առանց ընկերության ֆինանսական ռեսուրսները տնօրինելու, ծախսելու կամ նախաձեռնելու սահմանափակման՝ կիրառելու համար առողջությանը, անվտանգությանը և բնապահպանությանն առնչվող իրավունքները:

Դի Բարտոլոմեո Էվարիստո
Ծնված Տորե Դե Պասերիում (PE) 15/08/1957-ին
Հարկային կոդ՝ DBRVST57M15L263T
- Տնօրեն՝ նշանակված 01/04/2015 կնքած ակտով
ներկայացած 13/04/2015
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Առաջին գրանցումը՝ 06/08/2014

Գալո Լիվիո
Ծնված Բելգիրատեում (VB) 17/06/1950-ին
Հարկային կոդ՝ GLLLVI50H17A742D
- Տնօրեն՝ նշանակված 01/04/2015 կնքած ակտով
ներկայացած 13/04/2015
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Առաջին գրանցումը՝ 28/11/2014

Վենտուրինի Ֆրանչեսկո
Ծնված Նյու Յորք նահանգում, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 02/11/1968-ին
Հարկային կոդ՝ VNTFNC68S02Z404R
- Տնօրեն՝ նշանակված 01/04/2015 կնքած ակտով
ներկայացած 13/04/2015
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Առաջին գրանցումը՝ 28/11/2014

Վիալե Էնրիկո
Ծնված Մոնդովիում (CN), 21/09/1957-ին
Հարկային կոդ՝ VLINRC57P21F351B
- Տնօրեն՝ նշանակված 01/04/2015 կնքած ակտով
ներկայացած 13/04/2015
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Առաջին գրանցումը՝ 28/11/2014

Կորսի Մարիո
Ծնված Տրիեստեյում (TS), 18/07/1954-ին
Հարկային կոդ՝ CRSMRA54L18L424W
- Տնօրեն՝ նշանակված 25/05/2017 կնքած ակտով
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Առաջին գրանցումը՝ 22/11/2016

Կեչարինի Տիցիանո
Ծնված Միլանում (MI), 21/10/1973-ին
Հարկային կոդ՝ CCTZN73R21F205Q
- Տնօրեն՝ նշանակված 25/05/2017 կնքած ակտով
Ներկայացած 20/06/2017-ին
պաշտոնավարության ժամկետը՝ մինչ 31/12/2017-ի ֆինանսական հաշվետվությունների հաստատումը
Առաջին գրանցումը՝ 03/08/2017

55 այլ անձիք ունեն պաշտոններ կամ որակավորումներ:

Մինչ 07/12/1995-ին ընդունած համար 581 նախագահական հրամանի ուժի մեջ մտնելը կիրառված ակտերի հետ կապված տեղեկությունն ու մանրամասները կարող են ցուցադրվել քաղվածքների կամ համառոտ տեքստի միջոցով:

Սույն վկայականը տրամադրում է տեղեկություն/մանրամասներ, որոնք գրանցված են Ռեեստրում ներքոնշյալ ամսաթվին:

Սույն վկայականը չի կարող ներկայացվել հասարակական կառույցներին կամ մասնավոր սեկտորի հասարակական ծառայություն տրամադրողներին:

Կնիքի վճարն արված է էլեկտրոնային եղանակով՝ Միլանի հարկային գրասենյակում համար 6743-ի ներքո 11/09/1978-ին:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Վճարված՝ | հարկային կնիքի համար | 5 | եվրո | 80.00 |
| | Ծախսերի համար | | եվրո | 5.00 |
| Ընդամենը | | | եվրո | 85.00 |

Ընդամենը գումար՝ արտահայտված իտալական լիրով՝ 164581

Վերոնշյալ ընկերության համար գրանցված չեն սնանկության վարույթներ առևտրի ռեեստրում՝ համաձայն գործող կանոնակարգերի:

Ռեեստրավար՝ Ջանֆրանկո Վանցելի
Գործավար

Մարիա Գրացիա Պարիզե /ստորագրություն, կնիք/

Գործ no. : CEW/10175/2017/CMI1932
Վկայականի ավարտը

Առկա է Իտալիայի Հանրապետությունում տրված Ապոստիլ N 697/2017, 26 սեպտեմբերի 2017թ.

*Թարգմանությունը կատարվել է լրիվ, ճիշտ՝ թարգմանիչ Սյուզաննա Մինասյանի կողմից:*

*Թարգմանիչ՝ Սյուզաննա Մինասյան*



**Նոտարական ակտի կոդ:** 545-20171017-67-1839795
**Նոտարական ակտի գաղտնագիր:** LWZXSY

երկու հազար տասնյոթ թվականի հոկտեմբերի տասնյոթ

Ես, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար՝ ԱՏՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆՍ, վավերացնում եմ տվյալ տեքստի անգլերեն լեզվից հայերեն լեզվով թարգմանչի ստորագրության իսկությունը: <Նոտարիատի մասին> ՀՀ օրենքի 68 հոդվածի համաձայն հաստատում եմ փաստաթղթի թարգմանությունը կատարած թարգմանչի ստորագրության իսկությունը, այլ ոչ թե դրանում շարադրված փաստերը:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 27713

Գանձված են պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և հինգ հարյուր ՀՀ դրամ ծառայության վճար, համաձայն <Պետական տուրքի մասին> և <Նոտարիատի մասին> ՀՀ օրենքների

Նոտար ---------------------------------------- Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

